



Հաղորդագրութիւն Թիւ 2

Իսրայէլ Չարնի ելոյթ պիտի ունենայ Երեքշաբթի, Ապրիլ 24-ին, Սոնթաբլոյի յուշահանդէսին

Սոնթաբլոյի Հայկական Ցեղասպանութեան Նահատակաց Յուշարձանին մօտ, Ապրիլեան Եղեռնի 97րդ տարելիցը հանդիսաւորապէս նշելու ուղղութեամբ՝ Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Միացեալ Մարմնի կազմակերպչական համակողմանի աշխատանքները կ'ընթանան մեծ թափով:

Ապրիլ 24ի յուշահանդէսին գլխաւոր բանախօսը պիտի ըլլայ Ցեղասպանութեան մասնագետ Իսրայէլ Չարնի, որ Միացեալ Մարմնի հրաւերին ընդամաջելով Իսրայէլէն Լոս Անճելլոս պիտի ժամանէ եւ իր պատգամը փոխանցէ յուշահանդէսի ներկաներուն: Հոգեհանգստեան արարողութիւնը պիտի կատարուի մասնակցութեամբ բոլոր համայնքներու կրօնապետներուն: Հրաւերներ առաքուած են Նահանգային, դաշնակցային, քաղաքային եւ տեղական պաշտօնատարներու ներկայացուցիչներու մասնակցութիւնը ապահովելու նպատակով: Յուշահանդէսին աւուր պատշաճի խմբերգներով ելոյթ պիտի ունենայ Զալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան երգչախումբը, ղեկավարութեամբ մայեստրօ Միքայէլ Աւետիսեանի: Հ.Ս.Ը.Մ.ի եւ Հ.Բ.Ը.Մ.ի սկաուտները իրենց մասնակցութիւնը պիտի բերեն դրօշակի արարողութեան: Ծաղկեպսակներ պիտի զետեղուին մասնակից բոլոր կազմակերպութիւններուն կողմէ:

Յատուկ աշխատանք կը տարուի ապահովելու հայկական դպրոցներու բարձր դասարաններու աշակերտութեան միասնական ներկայութիւնը: Միացեալ Մարմինը կոչ կ'ընէ նաեւ հանրային դպրոցներու բարձրագոյն դասարաններու աշակերտութեան՝ յարգել Եղեռնի նահատակներու յիշատակը եւ ներկայ ըլլալ 24 Ապրիլին տեղի ունենալիք յուշահանդէսներուն, յատկապէս Սոնթաբլոյի Յուշարձանի մօտ կայանալիք յուշահանդէսին:

Արդ, սիրելի հայ ժողովուրդ, Երեքշաբթի, Ապրիլ 24ին խումներամ դիմենք դէպի Սոնթաբլոյի Նահատակաց Յուշարձան, անգամ մը եւս յարգելու մեր նահատակներուն յիշատակը եւ աշխարհով մէկ յայտարարելու, թէ մենք պիտի շարունակենք մեր պահանջատիրական պայքարը, մինչեւ որ Թուրքիան ճանչնայ իր մեղքը, ընդունի յանցանքը եւ հատուցում կատարէ հայ ժողովուրդին:

Յուշահանդէսը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 24 Ապրիլ, կէսօրէ ետք 1:30էն մինչեւ 3:30:

**ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ
ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ - ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ**

Մարտ 19, 2012